# ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԵՐԳ ԵՒ ԴԱՇՆԱԿ

## Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

*ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ*


ԿԱՆԱՉ ԱՂԲԷՐ — ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ
ԺԱՄԱՀԱՐԸ — ԳԱՐՆԱՆ ԿԱՐՕՏ
ԾԱՂԻԿՆ ՈՒ ԹԻԹԵՌ — ՆԱՒԱԿԸ


ՀԱՏՈՐ 13

*ՊՈՍՏՈՆ*
Copyright 1933, by V. Servantz, Boston

Dessin de
R. CHICHMANIAN

1227
4 прим

II Կ 784.67
Մ-91

# ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԵՐԳ ԵՒ ԴԱՇՆԱԿ

## Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


| | |
|---|---|
| ԿԱՆԱՉ ԱՂԲԻՒՐ | ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ |
| ԺԱՄԱՀԱՐԸ | ԳԱՐՆԱՆ ԿԱՐՕՏ |
| ԾԱՂԻԿՆ ՈՒ ԹԻԹԵՌ | ՆԱՒԱԿԸ |


ՀԱՏՈՐ 13

Հեղինակին ստորագրութիւնը չկրող օրինակ-
ները անվաւեր են:

ՊՈՍՏՈՆ
Copyright 1933, by V. Servantz, Boston

Dessin de
R. CHICHMANIAN

# ԿԱՆԱՆՉ ԱՂԲԵՐ

Երաժշտութիւն՝
Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Բանաստեղծութիւն՝
* *
*




2013
2002
Гос Библиотека ՀԱՍՍՀ-Арм. ССР им. А. Мясникяна Ա. Մյասնիկյանի անվ.
317-աև
20599-65 գ
1227-Ա2

# ԿԱՆԱՉ ԱՂԲԵՐ

Է՛յ կանաչ աղբէր,
Է՛յ ճանաչ աղբէր,
Եկուր շաղերով,
Զըւարթ շողերով:

Բեր անուշահոտ,
Ծիլ, ծաղիկ ու խոտ,
Յորդ պղտոր վըտակ,
Երկինք կապուտակ:

Բեր ուրախութիւն,
Գառն ու ուլ խայտուն,
Խատուտիկ հաւքեր,
Զնգան մեր երգեր:

Եկուր շաղերով,
Զըւարթ շողերով,
Է՛յ կանաչ աղբէր,
Է՛յ ճանաչ աղբէր:

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ–Арм ССР
им А Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

# ԺԱՄԱՀԱՐԸ

Ներդաշնակութիւն՝
Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Բանաստեղծութիւն՝
ՀՄԱՅԵԱԿ ՇԻՄՍ






# ԺԱՄԱՀԱՐԸ

1

—«Ժամահարն եմ դղեակին,
Կը զարնեմ ես թիք թաք,
Թիք թաք, թիք թաք կը հնչեն,
Զարկերս ինչպէս նըւագ»:
—«Ո՛վ ժամահար ինձ ասա,
Զարկերով քո յստակ,
Ժամն այս պահուս քանի՞ն է,
Դէ՛հ զարկ հիմա թիք թաք»:

2

— «Լսիր սիրով քեզ կ'ասեմ,
Քանի՞ն է ժամն հիմա,
Վերջացած է քո խաղը,
Սիրտդ աշխատանք կը ցանկայ»:
—«Հնչէ՛, հնչէ՛ ժամահար,
Սիրական քո նըւագ,
Աշխատանքի պահն է արդ,
Դէ՛հ, զարկ հիմա թիք թաք»:

ՀՄԱՅԵԱԿ ՇԷՄՍ

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐ ԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽՌ-Арм. ССР

# ԾԱՂԻԿՆ ՈՒ ԹԻԹԵՌ

Ներդաշնակութիւն՝
Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Բանաստեղծութիւն՝
ՀՄԱՅԵԱԿ ՇԻՄՍ



# ԾԱՂԻԿՆ ՈՒ ԹԻԹԵՌ

1

Ծաղիկն ըսաւ թիթեռին,
Ա՛յ թիթեռ ոսկեթեւ,
Դու ծաղիկն ես եթերին,
Կը թռչիս միշտ թեթեւ,
Ես ալ թիթեռն եմ հողին,
Ու չունիմ քո թեւեր,
Որքան կարօտ եմ շողին,
Տար ինձ քեզ հետ դէպ վեր:

2

Մարդ չը գիտէ որ ես ալ,
Թիթեռ եմ շղթայուած:
Կ'ուզեմ թռչիլ ու խայտալ,
Ցուրտ հողէն ազատուած:
Մինակ վշտոտ կ'երգեմ ես,
Բոյրս է երգ մը տրտում:
Գարնան թեւով նուրբ ու հեզ,
Կը թռչի ան հեռուն:

3

Թիթեռ կրնաս հասկնալ,
Միայն դու ցաւըս խոր:
Չէ՞ որ ծաղիկ ես դուն ալ,
Միայն թէ թեւաւոր:
Սիրուն թիթեռ գթա ինձ,
Տուր ինձ ոսկի թեւեր,
Ցրէ վշտերս ու թախիծ,
Տար ինձ քեզ հետ դէպ վեր:

ՀՄԱՅԵԱԿ ՇԷՄՍ

# ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ

Ներդաշնակութիւն՝
Վ. ՄՐՈՒԱՆՋՏԵԱՆՑ

Բանաստեղծութիւն՝
ՀՄԱՅԵԱԿ ՇԷՄՍ



# ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ

1

Հին, փառաւոր իմ հայրենիք,
Նորէն կանգնել ես անահ,
Աւերներէդ բիւր վարդենիք
Ծաղկել, ժպտում են հիմա:

2

Արիւնաներկ գետերդ ահեղ,
Ազատ ափ են մռնչում,
Քո կարօտով արդ խելայեղ,
Հոգիս դէպ քեզ է թռչում:

3

Հազար անգամ աւեր տեսար,
Շղթայւեցիր բիւր անգամ,
Հազար անգամ ոտքի ելար,
Սէգ հայրենիք արնաքամ:

4

Քո երկաթէ խօսքն ես նետել,
Անցնող բոլոր դարերին,
Ստրկութեան միշտ անընտել,
Պիտի պանծաս դու կրկին:

ՀՄԱՅԵԱԿ ՇԷՄՍ

# ԳԱՐՆԱՆ ԿԱՐՕՏ

Երաժշտութիւն՝
Վ. ՄՈՑԱՐՏ

Թարգմանութիւն՝
ԳԷՈՐԳ ԿԱՌՎԱՐԵՆՑ



# ԳԱՐՆԱՆ ԿԱՐՕՏ

1

Եկ զարդարել օ՛ Մայիս,
Դու կրկին թուփ ու ծառ,
Մանշակներուն հետ թող զիս,
Առուակին մօտ պայծառ։
Որքա՜ն կարօտ եմ, կարօտ՝
Ես անոնց տեսքին հեզ·
Սիրուն Մայիս անոնց մօտ,
Թափառել կ'ուզեմ ես։

2

Դաշտերն ըլլան թող շքեղ,
Մարգերուն վրայ բերկրինք,
Բեր մեզ նորէն կապտագեղ,
Մանուշակ ու երկինք։
Քեզ հետ նորէն ինչպէս միշտ,
Բեր կարկաչ ու կանանչ,
Ու թռչնիկներ երամիշտ,
Մանիշակ ու ճաճանչ։

Թարգմ·
ԳԷՈՐԳ ԿԱՌՎԱՐԵՆՑ

# ՆԱՒԱԿԸ

Ներդաշնակութիւն՝
Վ. ՄՐՈՒԱՆՋՏԵԱՆՑ

Թարգմանութիւն՝
ՀՄԱՅԵԱԿ ՇԷՄՍ




## ՆԱՒԱԿԸ

1

Գեղ է համակ,
Իմ այս նաւակ,
Առագաստն է թեւ մը ճերմակ:
Օ՛ն նաւարկենք մենք խաղաղաւո,
Երթանք հեռու մենք խնդաղաւո,
Գեղ է համակ,
Իմ այս նաւակ:

2

Նաւակն ահա
Կը սըլանայ,
Մեղմ ծըփանուտ ջուրին վրայ:
Կը փախչի ափն ինչ տեսարան,
Հովերուն հետ կը սըլանամ,
Նաւակն հիմա,
Թող սըլանայ:

3

Երազի պէս՝
Կը մեռնի հեզ,
Փռելով օրն ափին բեհեզ:
Վերջ տանք սակայն մեր վայելքին,
Կուգան ամպեր սեւ մթագին:
Ափը բեհեզ,
Կը մեռնի հեզ:

Թարգմ. ՀՄԱՅԵԱԿ ՇԷՄՍ

ԶՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

ՀՀ Ազգային գրադարան
NL0684118

1227
նոտա
784
Ս-91

## ԵՐԳԱՀԱՆ Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑԻ
## ՆՈՐԱԳՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

| Հատոր | | | |
|---|---|---|---|
| 8–9 | Սիրոյ եւ Կարօտի Երգեր | (2 հատոր) | 10 մեներգ դաշնակով |
| 10–11 | Հայ ժողովրդական Երգեր | (2 հատոր) | 12 մեներգ դաշնակով |
| 12–13 | Մանկական Երգեր | (2 հատոր) | 12 երգ դաշնակով |
| 14–15 | Գոհարներ | (2 հատոր) | 10 մեներգ դաշնակով |

*Իւաքանչիւր հատորի գինն է* $1·25
*Ութը հատորը միասին՝* $8·00

## ՆԱԽՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

| Հատոր | | | |
|---|---|---|---|
| 1–3 | ............ Հայ Երգեր (3 հտր.) | 18 մեներգ դաշնակով | 1921–2 |
| 4 | ............................... Հայ Պարեր | 6 պար դաշնակի համար | 1926 |
| 5 | ............................... Նոր Երգեր | 6 մեներգ դաշնակով | 1926 |
| 6 | ........................... Հոգիի Ձայներ | 6 մեներգ դաշնակով | 1927 |
| 7 | ......................... Գեղջուկ Երգեր | 6 մեներգ դաշնակով | 1927 |

*Իւրաքանչիւր հատորի գինն է*........ $1·25
*Եօթը հատորը միասին* .................... $7·00

Առանձին լոյս տեսած է խիստ ժողովրդական սիրոյ երգը՝

*Օ Ո՛ Ւ Պ Ը Ճ Ի Ն Կ Օ*
*Գին՝* 50 *սէնթ*

Ապսպրանքներ կ'ընդունուին կանխիկ կամ C. O. D.
*Ամէն նամակ չէք կամ մընի օրտըր ղրկել հեղինակին՝*
V. M. SERVANTZ, 23 Wheeler St., Boston, Mass.
Telephone: Hubbard 0491